սանձելու հայ իշխաններին։

Գարնան 854 թուին սկսում են կռիւները Աղուանից իշխան Աբու Մուսէ՝ երիցու որդի կոչուած, իշխանի հետ, Իսկական անունն էր Եսայի, Ստեփաննոսի քեռորդին, ինչպէս տեսանք վերը։ Նա խրախուսուած Մանարների յաջող դիմադրութիւնից, վճռում է պաշտպանուել։ Մարտական մեծ կորով է ցոյց տալիս Աբու Մուսէ եւ ամօթահար անում խրոխտ թիւրք զօրավարին։ Մենամարտութիւնը շարունակւում է գրեթէ մի ամբողջ տարի, 28 ճակատ է տեղի ունենում եւ յաջողութիւնը միշտ Աղուանից իշխանի կողմը։

Աբու Մուսէ յայտնում է որ զէնքը վայր կը դնէ միայն այն դէպքում, եթէ ամիրապետն ինքը կ'երաշխաւորէ նրա ապահովութիւնը։ Շուտով գալիս է արքունական թուղթն ու ներումը եւ «պարգեւս ի պատուական եւ մեծագնի հանդերձից եւ սաղաւարտ ծաղկեայ եւ սուսեր», այլ եւ հրաման Բուղայի անունով, որով պատուիրում է Աբու Մուսէին զրկել Սամառա մեծ «պատուով եւ զգուշութեամբ»։

Աբու Մուսէ իջնում է լեռներից եւ ներկայանում Բուղային։ Ընդունելութեան տեսարանը ծածկում է գինուորական պատուի տակ անսովոր նենգութիւն. «ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու եւ ընտրեալ երիվարք եւ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս եւ երեւելիս եւ երգեցիկս եւ գովասացս եւ բազում գործիս երաժշտականս առաջի եւ զկնի մինչեւ եմուտ ի բանակն նոցա»։

Այսպէս ընդունեց Բուղան նաեւ Գուրգէն Արծրունեաց իշխանին, եւ նրա նման Աղուանից իշխանն եւս ուղարկուեց Սամառա։

Այնուհետեւ Բուղա հրաւիրում է միւս իշխաններին իջնել իրենց ամրութիւններից եւ տիրանալ իրենց իշխանութեան առանց երկիւղի, հրաւիրում է իր մօտ որպէս թէ յայտնելու նրանց թագաւորի բարի կամքը։ Երբ իշխանները ժողովում են նրա մօտ, Բուղա հրամայում է արաբական զօրքերին շրջապատել նրանց գիւղերը, երբ անվրդով քնած էին, եւ շղթայել իշխաններին ուղարկելու Սամառա։ Սրանց մէջ էին Ատրներսեհ Աղուանից իշխան, որ է Խաչենի իշխան եւ փեսայ Առանշահիկ տոհմի վերջին շառաւիղի, եւ Սիւնեաց իշխանները։

Թովմա Արծրունին յիշում է չորս հոգի՝
Գրիգոր Սիւնեաց տէր,
Վասակ Վայոց Ձորոյ տէր,
Փիլիպպէ Սիւնեաց իշխան,
Ներսեհ իշխան Գարիթաժանեց։

Վասակ եւ Ներսեհ Փիլիպպէի որդիքն էին։ Յովհ. կթ. ասելով, Վասակի հետ բռնուեց նաեւ նրա եղբայր Աշոտը եւ իրենց մայրը։ Գրիգորը այն Գրիգորը չէ որ կոչւում էր Սուփան։ Նա սպանուեց Բուղայի գալուց մի տարի յառաջ, ուրեմն 857 թուին։ (Կաղ. Գ. 20, Կաթ. 60)։ Օրբելիան սրան ի նկատի ունի երբ Փիլիպպէի եւ Սահակի կից յիշում է՝ եւ միւս իշխանն Գրիգոր ի նոյն ցեղէ. (Բ. 57)։

Գարիթայան աշխարհագրական անունը այլուր անծանօթ է, հաւանօրէն, աղաւաղ ընթերցուած է։ Թոմա չի յիշում Գարդմանի կտրիճ իշխանին, որ ըստ Յովհ. կաթողիկոսի նոյնպէս գերեալների թւումն էր։ Արդեօ՞ք «Գարիթայանից» ազգատումն չէ «Գարդմանից»։ Այն ժամանակ պէտք է ընդունել, որ ընտրելից ընկած է նաեւ Ներսեհի երկրի անունը եւ կտրիճ-Ներսեհ իշխան «կապանի՞ եւ կտրիճ իշխան» Գարդմանից։

Կապեալների մէջ էր նմանապէս Սահլ Սմբատեանը, որին Թովման կոչում է Շաքէոյ տէր. մեղ արդէն ծանօթ իշխանը, որ կալանաւորեց Բարակին։

Բաղրեւանդում մնացել էր Մամիկոնեանների Բուրդիկ իշխանը, որի մօտ ապաստանել էր իր քեռորդին՝ Վասպուրականի իշխաններից Գուրգէն Արուրելէ։ Բուղայի զոհերի մէջ էր այս Բուրդիկի որդին Գրիգորը։

Ինչ որ անսպասելի էր, Բուղան կալանաւորում է նաեւ Սմբատ Բագրատունուն, նրան, որին պատմագիրները համարում էին առաջնորդ արաբական չարագործութեան։ Բուղան, ուրեմն, աւելի տեղեակ էր Սմբատի գործելակերպի թաղնուած ոգուն քան մեր պատմագիրները, որ միշտ յոռետես են դէպի հայրենի ոյժերը։

Ազատ են մնում Սմբատի որդիները՝ Աշոտ, Մուշեղ եւ Սմբատ։ Հօր տեղն է անցնում Աշոտ։

(Շարունակելի)